ՀԻՄՆԱՀԱՐՑ

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆ ՊԻՏԻ ՃԱՆԱՉԻ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Արևիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարցազրույց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիա-Լոս Անջելես համալսարանի հայագիտական ամբիոնի գիտաշխատող *Ռուբինա Փիրումյանի հետ:*

Նա հեղինակ է Հայոց ցեղասպանության գրականությունն ուսումնասիրող մի շարք աշխատությունների և «Հայ դատ», «Հայկական հարցի պատմություն» դասագրքերի:

- Տիկին Փիրումյան, ըստ Ձեզ՝ հայ հասարակությունը բավականաչափ իրազեկվա՞ծ է 1915թ. իրադարձությունների և ցեղասպանության պատճառների մասին:

- 1915-ի Հայոց ցեղասպանությանը՝ որպես պատմական իրողության, իր բոլոր ծալքերով և մանավանդ քաղաքական ու իրավական նշանակությամբ, այդքան էլ լայն կերպով իրազեկված չէ հայ հասարակությունը, մանավանդ Հայաստանում, երբ խորհրդային լծի տակ հայ մարդը պարտադրվում էր մոռանալ անցյալը, չխոսել, չգրել, չհիշել մոտիկ անցյալում իր դեմ, իր նախնիների դեմ կատարված ահավոր աղետի մասին, երբ հայոց պատմությունը դպրոցներում դասավանդվում էր շատ հպանցիկ՝ Խորհրդային Միության պատմության մեջ պահ տված: Իհարկե, պիտի ասել, որ Եղեռնի հիսնամյակի տարերային ցույցը Երևանում եկավ ապացուցելու, որ պատմական հիշողությունը չի մեռնում և, թեկուզ գաղտնաբար, փոխանցվում է սերնդե սերունդ: Այսօր այլ է իրավիճակը: Հայ աշակերտը Հայաստանում առիթն ունի սերտելու նախապես արգելված այդ ժամանակահատվածի պատմությունը, իսկ սերունդների դաստիարակությունը Հայոց ցեղասպանության և ընդհանրապես Հայկական հարցի վերաբերյալ հենց դպրոցական տարիքից է սկսվում: Ուրեմն առիթը կա, միայն դասավանդումը, թե՛ Սփյուռքում և թե՛ Հայաստանում, պետք է լինի շրջահայաց և ճիշտ մոտեցումով, ո՛չ զգացական և մակերեսային: Հայ պատանին պիտի գիտենա, թե երիտթուրքերի կառավարությունը ինչո՞ւ, ինչպե՞ս և ի՞նչ գաղափարաբանությանը հետևելով փորձեց իր դարավոր հայրենիքից դուրս շպրտել և արդյունքում բնաջնջել հայ ժողովրդին, պիտի գիտենա, թե այդ Աղետը ինչ անդրադարձ է ունեցել և դեռ ունի հայ մարդու վրա և ինչ անդրադարձ պիտի ունենա Հայաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության վրա:

- Իսկ թուրք հասարակությանը հասո՞ւ են իրական փաստերը, որպեսզի կարողանա ճիշտ եզրահանգումներ անել, այսինքն՝ կարելի՞ է ակնկալել, թե թուրք հասարակության գիտակցությունը կհասնի նրան, որ ընդունի Հայոց ցեղասպանությունը:

- Յուրաքանչյուր անհատի աշխարհայացք սկսում է ձևավորվել դպրոցական հասակից, իսկ թուրքական պատմության դասագրքերում 1910-20-ական թվականները չափազանց աղավաղված են ներկայացված: Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, ինչպես նաև Քեմալ Աթաթուրքը հերոսացված են: Թուրք հասարակությունը դաստիարակվում է նրանց գաղափարախոսություններով, և նրա ազգային ինքնությունը կաղապարվում է՝ հանրապետական Թուրքիայի հերոսական սկզբնավորումը հիմք ունենալով: Իսկ այդ հիմքում, եթե թուրք անհատը փորձի պրպտել, պիտի գտնի Օսմանյան կայսրության ոչ թուրք բնակչության հալածանքն ու բնաջնջումը, այսինքն՝ իր պաշտած ազգային հերոսները ջարդարարներ են եղել:

Հարկ է նշել, որ այսօր իրավիճակը Թուրքիայում որոշ տեղաշարժի է ենթարկվել: Կան մտավորականներ, որոնք փորձում են բարձրաձայնել իրական փաստերը (Թանցը Աքչամ, Ֆաթմե Գեոչեք). կան գրողներ, որոնք իրենց գեղարվեստական գրականության մեջ անդրադառնում են Հայոց ցեղասպանությանը (Էլիֆ Շաֆաք «The bastard of Istanbul», Ֆեթիե Չեթի «Իմ մեծ մաման», Քեմալ Յալչընը «Հոգիս քեզմով կխայտա», Օրհան Փամուք «Ձյունը» և այլն): Հետաքրքիրն այն է, որ այս մտավորականները և նրանց հետ մի շարք լրագրողներ Թուրքիայի օրենսդրության 301 հոդվածով դատապարտվում են՝ Թուրքիային վարկաբեկած լինելու մեղադրանքով. և այս դատավարություններն ու դրանց զուգընթաց՝ Եվրամիության մեջ մուտք գործելու համար պայման դրված Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի արծարծումը Թուրքիայի լրատվամիջոցներով, իրականության մեջ, թուրք հասարակությանը անուղղակի իրազեկ է դարձնում Հայկական հարցի գոյությանը: Այսպես, թուրքական ուրացման պատը ճեղքված կարելի է համարել, Հայկական հարցի մասին խոսելու տաբուն՝ վերացված: Բայց այս բոլորով հանդերձ, դեռ շատ հեռու է այն օրը, երբ թուրք հասարակությունը պիտի կարողանա ճիշտ եզրահանգումներ անել:

- Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչման խնդրում կա՞ մեծ տերությունների, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայկական կողմի համար ոչ դրական դիրքորոշման գործոնը:

- Ես այդպես չեմ կարծում, ավելի շուտ՝ Թուրքիայի միջոցով է, որ կգա ցեղասպանության միջազգային ճանաչումը: Ճիշտ է, ԱՄՆ-ում ակտիվորեն գործում են Հայ դատի հանձնախմբեր, որոնք պայքար են տանում Սպիտակ տան կողմից ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար, և կա առաջընթաց: Այսօր Միացյալ Նահանգների լրատվական կարևոր հաստատությունները համարձակորեն 1915-ի դեպքերը ցեղասպանություն են կոչում: Այդուհանդերձ, ԱՄՆ-ի ներկա վարչակազմի դիրքորոշումը, նրա ռազմական շահերը և Միջին Արևելքում ունեցած խախուտ դիրքը նրան ավելի ու ավելի են մոտեցնում Թուրքիային: Այս պայմաններում Թուրքիայի քաղաքականությունն է բախտորոշ դերում և ո՛չ ԱՄՆ-ի:

- Հայ-թուրքական սահմանի բացման դեպքում Թուրքիան կունենա՞ որևէ ակնկալիք:

- Թուրքիան ցույց է տալիս, որ հայ-թուրքական սահմանի բացումը ձեռնտու է միայն հայկական կողմին: Բայց, ըստ իս, Հայաստանի համար դա այնքան էլ շահեկան չէ, իսկ Թուրքիան դրանով կարող է ցույց տալ, թե ինքը քաղաքակիրթ

երկիր է և իր հարևանների հետ ունի բարիդրացիական հարաբերություններ: Վերջինս սահմանների բացումը ենթադրում է առանց որևէ նախապայմանի, իսկ դա մեզ համար կարևորագույն խնդիր չէ, որին գրավ դնենք ցեղասպանության ճանաչումը: Փաստն այն է, որ սահմանները՝ բաց թե փակ, տնտեսական մեծ շփում կա երկու կողմերի միջև, գործում է նաև օդային կապ:

- Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրում որը՞ պետք է լինի մեր վերջնական նպատակը:

- Ոմանց, նույնիսկ մի շարք մտավորականներ կարծիքով՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումով հարցը փակվում է, բայց ես էլ պատկանում եմ այն փաղանգին, որ հավատում է, թե դա մեր պահանջատիրության առաջին փուլն է միայն: Մեր ժողովրդի դեմ կատարված անարդարությունը պետք է հատուցվի, և դա ենթադրում է ոչ միայն ճանաչում, այլ նաև հատուցում՝ հողային և տնտեսական վնասների: Սա պետք է լինի մեր վերջնական նպատակը:

- Ինչպե՞ս առաջացավ Հայկական հարցի մասին դասագիրք գրելու գաղափարը: Դրա համար առկա՞ էին հատուկ նախադրյալներ:

- Հայ դատի դասավանդումը սփյուռքի և մանավանդ՝ ԱՄՆ-ի ազգային դպրոցների վերին կարգերում, և, ընդհանրապես, Հայ դատի էությունը սփյուռքահայ երիտասարդության մեջ տարածելու անհրաժեշտությունը բնական զարգացման մեկ փուլն էր Եղեռնի հիսնամյակին հաջորդող հայապահպանումից քաղաքականացում և պահանջատիրություն անցնելու հոսանքի: Պետք էր քննական մոտեցումով վերլուծել մոտիկ անցյալի մեր պատմությունը, գտնել Հայկական հարցի սկզբնավորումը, հիմնավորել մեր ազատագրական պայքարն ու պահանջատիրությունը և այդ բոլորի միջոցով և ընդմիջից ամրակայել հայ երիտասարդի ազգային ինքնությունն ու պատկանելությունը: Առանց դասագրքի, ուսուցչի կամ երիտասարդ գործչի հավաքած նյութերով, այդ բոլորի փոխանցումը անկարելի էր: Ես ինքս այդ փորձությանը ենթարկվեցի 1980-ականներին, երբ որպես կամավոր ուսուցիչ Լոս Անջելեսի Ֆերահյան վարժարանում Հայ դատ էի դասավանդում: Դասագիրք կազմելու գաղափարը առաջացավ ժամանակի Հայ դատի հանձնախմբում, որին անդամ էի, ապա Հայաստանյայց եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի (Կիլիկիո) առաջնորդարանի հետ համագործակցաբար կազմվեց Հայ դատի դասագրքի հանձնախումբ, և աշխատանքը սկսվեց: Առաջին փորձառական դասագիրքը (Հայ դատ 10) հավաքական աշխատանքով հրատարակվեց 1990-ին, ապա ինձ առիթ ընծայվեց վերանայելու այն և հեղինակելու Հայ դատի դասագրքերը՝ 10-րդ (2000թ.), 11-րդ (1994թ.), 12-րդ (1999թ.):

Պարզ է, որ միանգամայն այլ նախադրյալներ պատճառ դարձան Հայաստանում ևս Հայկական հարցի մասին դասագիրք ստեղծելու: Դրա մտահղացումը և նախաձեռնությունը պատկանում է պարոն Լևոն Մկրտչյանին՝ 1998-ին իր առաջին անգամ նախարար եղած ընթացքում: Այդ քայլով անկախ Հայաստանը յուրացնում էր սփյուռքի ազգային մտահոգություններն ու փորձը: Հպարտ եմ, որ «Հայկական հարցի պատմություն» դասագրքի հեղինակությունը ինձ վստահվեց, իհարկե, ունենալով տեղի մասնագետների օգնությունն ու արժեքավոր կարծիքները: «Հայկական հարցի պատմությունը» հրատարակվեց 2001-ին՝ փորձառական շրջանի համար, իսկ 2003-ին մեծ տպաքանակով՝ ամբողջ համակարգի համար: Թե որքանո՞վ դասագիրքը ցրվեց Հայաստանում, կամ որքանո՞վ ընդառաջվեց այն ժամանակի կրթության նախարարության մեջ այդ գործի պատասխանատու հիմնարկության կողմից, այլ հարց է:

- Դասագրքերը դասավանդվո՞ւմ են ԱՄՆ-ի և ընդհանրապես սփյուռքի հայկական կրթօջախներում:

- Դասագրքերը ուսուցանվում են ԱՄՆ-ի և, ինչու չէ, նաև սփյուռքի մի քանի այլ ազգային վարժարաններում, օգտագործվում պատանեկան և երիտասարդական կազմակերպությունների դաստիարակչական ծրագրերում:

- Ձեր հեղինակած դասագրքերի միջոցով փորձ եք անում հայ երիտասարդին գիտակից դարձնել իր պատմական անցյալի հերոսական էջերին, ինչպես նաև համաշխարհային պատմության այն անցքերին, որոնք անդառնալիորեն փոխեցին հայ ժողովրդի ճակատագիրը: Այսօր տեսնո՞ւմ եք Ձեր աշխատանքի պտուղները:

- Շատ հավակնոտ պիտի հնչի, եթե ձեր հարցումին դրական պատասխանեմ: Պիտի ասեմ, սակայն, որ ընդհանրապես հանձնառու երիտասարդության փաղանգը ստվարանում է մանավանդ սյուռքում՝ շնորհիվ նպատակաուղղված դաստիարակության՝ թե՛ դպրոցներում և թե՛ երիտասարդական կազմակերպություններում: Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության շուրջ խնդիրների արծարծման մեջ վերջին ժամանակների երիտասարդության բուռն մասնակցությունը ապացույցն էր դրա: Գործընթացը սկսվել է Հայաստանում, բայց մտայնությունները փոխելու համար երկար է ճամփան: Իհարկե, իրապաշտ լինելու համար պիտի տեսնել նաև այն իրողությունը, թե օտար մշակույթների ու համաշխարհայնացման ապազգայնացնող հոսանքին զոհ ենք տալիս նոր սերնդի մեծ մասը: Սա համազգային մտահոգություն է, և վտանգի առաջն առնելու համար պիտի մտածվի համազգային մակարդակի վրա:

- Տիկին Փիրումյան, մի քանի խոսքով կներկայացնե՞ք ԱՄՆ-ում Ձեր գործունեությունը:

- Համալսարանում դասախոսական գործունեությունս դադարել եմ և ցեղասպանության գրականության և բաղդատական ցեղասպանության գիտահետազոտական ասպարեզում շարունակում եմ ուսումնասիրություններս, որոնք հրատարակվում են միջազգային գիտական պարբերականներում, և կամ այդ ուսումնասիրությունների հիման վրա զեկույցներ եմ կարդում ցեղասպանության, Հայկական հարցի և ազգային ինքնության թեմաների շուրջ հրավիրված գիտաժողովներում: Իսկ հասարակական գործունեությանս ծիրի մեջ են հայեցի դաստիարակության և հայ դպրոցների կրթական հարցերը: Ներկայումս ատենապետն եմ Կալիֆորնիայի ազգային վարժարանների խնամակալ մարմնի, որ հենց այս աշխատանքին է լծված:

- Իսկ ի՞նչ առաքելությամբ եք այսօր Հայաստանում:

- Այս անգամ պարզապես ոչ մի առաքելություն, այլ ընտանեկան արձակուրդ: Եթե անցյալում պարտականություն էի ստանձնում դպրոցներ այցելելու, Հայկական հարցի պատմության դասեր ունկնդրելու, ուսուցիչների հետ Հայաստանի տարբեր շրջաններում աշխատանիստեր անցկացնելու և այլ պաշտոնական հանդիպումներ, այս անգամ ընտանիքիս ներկայությունն եմ վայելում այստեղ: Եվ իհարկե, սեպտեմբերին պիտի մասնակցեմ Հայրենիք-սփյուռք երրորդ խորհրդաժողովին:

- Իսկ ո՞րն է Ձեր նպատակը որպես հայուհի:

- Այսօր ոչ միայն իմ, այլև բոլորիս, թե՛ սփյուռքում և թե՛ հայրենիքում, նպատակը պետք է լինի նոր սերնդի հայեցի դաստիարակությունը, ընդ որում՝ հայոց պահանջատիրության սերմանումը: Իմ՝ որպես սփյուռքահայի խնդիրը, օտարության մեջ աճող երիտասարդության հայեցի մտածողության և ազգային ինքնության ամրակայումն է: Եվ ես դա փորձում եմ անել ոչ միայն իմ ընտանիքում, այլ նաև Կալիֆորնիայի ազգային վարժարանների խնամակալ մարմնի ատենապետուհու իմ հանգամանքով:

Եվ այս բոլորը մեր ժողովրդի վերջնական կամ գերագույն նպատակների իրագործման սիրույն: Ֆ